ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2022/78

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2022 թ. N 78

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ /ՃՇՀԱՀ/
Գործունեության հասցեն՝	ՀՀ, ք. Երևան, Տերյան 105
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝	ինստիտուցիոնալ հավատարմագրում, 5 տարի ժամկետով՝ 2015թ.-2020թ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2022 թվականի նոյեմբերի 29-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՃՇՀԱՀ, Համալսարան, բուհ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	16 հոկտեմբերի 2019թ.
ինքնավերլուծության ներկայացում՝	24 հոկտեմբերի 2021թ.
փորձագիտական այցի իրականացում՝	14-17 մարտի 2022թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝	08 հուլիսի 2022թ.

թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 14 սեպտեմբերի 2022թ.

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից անբավարար է գնահատվել **«Որակի ապահովման ներքին համակարգ»** չափանիշը:

Հանձնաժողովն, ուսումնասիրելով ՃՇՀԱՀ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ՃՇՀԱՀ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

ՃՇՀԱՀ-ն 2015 թվականին անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց Իսպանիայի Որակի գնահատման և հավատարմագրման ազգային գործակալության կողմից և հավատարմագրվել 5 տարի ժամկետով:

1. Համալսարանն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում

ՃՇՀԱՀ-ում գործող մասնագիտության կրթական ծրագրերը (ՄԿԾ) հիմնականում համահունչ են հաստատության առաքելությանը, մշակված և մանրամասն նկարագրված են ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության վերջնարդյունքների: Համալսարանում իրականացվում են նպատակաուղղված քայլեր կրթական ծրագրերի բարելավման և բարեփոխման համար:

ՄՈՒՀ-ում առկա են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագրերի օրինակելի ձևաչափեր, որոնց հիման վրա մշակվում են ՄԿԾ-ների մասնագրերը միևնույն ժամանակ ձևաչափերը հաստատման անհրաժեշտություն ունեն:

Ձևաչափերում ներառված են ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքների և դասավանդման, ուսումնառության ու գնահատման մեթոդների համապատասխանեցման գործիքներ:

Բուհում ՄԿԾ-ների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման մեխանիզմներ են դիտարկվում դասալսումները և հարցումները:

Հետադարձ կապի ապահովումը հիմնականում իրականացվում է ՊԴ կազմի և ոլորտում աշխատող շրջանավարտների միջոցով, ինչն էլ նպաստում է ՄԿԾ-ների բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացմանը:

ՃՇՀԱՀ-ում կրթական ծրագրերն իրականացնելու և բուհի առաքելությանը հասնելու համար առկա են անհրաժեշտ որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, ինչպես նաև նրանց ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ՊԴ կազմում ներգրավված են նաև դասախոսներ, որոնք գործնականում հանդիսանում են ոլորտի ներկայացուցիչներ ու իրենց փորձը բերում են բուհ, ուսանողներին ներգրավում են

պրակտիկ աշխատանքներում, ինչը դրական է ուսանողների մոտ գործնական հմտությունների ձևավորման տեսանկյունից: Մեծ ուշադրություն է դարձվում սերնդափոխությանը և երիտասարդ մասնագետներին ինչպես ուսումնակրթական, այնպես էլ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավմանը: Խրախուսվում է սեփական շրջանավարտներով կադրերի համալրման գործընթացը, որը դրական ազդեցություն ունի կայունության ապահովման տեսակետից:

Բուհի ՈւՕ կազմը ներգրավված է նաև հետազոտական աշխատանքներում:

ՃՇՀԱՀ-ի մշտական ուշադրության կենտրոնում են գտնվում ենթակառուցվածքների, շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավմանն ուղղված միջոցառումները: Վերջին 3 տարվա ընթացքում հիմնովին վերանորոգվել և ժամանակակից տեխնիկայով հագեցվել են համալսարանի լսարանները, կենտրոնները, իսկ լաբորատորիաները համալրվել են արդիական փորձասարքերով, ինչը նպաստում է ՄԿԾ-ներով սահմանված նպատակների իրականացմանը:

2. Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը

ՃՇՀԱՀ-ն ունի սահմանված և հրապարակված առաքելություն և ռազմավարական նպատակներ, որոնք, ընդհանուր առմամբ արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները: ՃՇՀԱՀ-ն իրականացնում է երկարաժամկետ պլանավորում, սակայն բացակայում է միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումը:

ՃՇՀԱՀ-ն կրթական և այլ ռազմավարական նպատակների իրականացման համար ունի անհրաժեշտ ստորաբաժանումներ ու համապատասխան որակավորումներ ունեցող վարչական, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմը:

Կառավարման կոլեգիալ բոլոր մարմիններում ներքին շահակիցների ներգրավման միջոցով բուհը հնարավորություն է ընձեռում ուսանողներին ու դասախոսներին մասնակցել որոշումների կայացմանը:

ՃՇՀԱՀ-ի կրթության որակի ապահովման կենտրոնը ևս ապահովված է անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներով:

Համալսարանը սահմանել է որակը, որակի ապահովման քաղաքականությունը և որոշ ընթացակարգեր, սակայն որակի ապահովմանն ուղղված գործողությունները միտված են միայն բուհի կրթական գործունեության ասպեկտների գնահատմանը, ՊԻԳԲ շրջափուլը լիովին չի գործում համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում: Տեսանելի չէ որակի ապահովման համակարգի միջոցով հավաքագրվող տեղեկատվության և ՌԾ-ի առաջընթացի գնահատման առանցքային ցուցիչներով (ԳԱՑ) սահմանվող տվյալների փոխկապակցվածությունը:

Միևնույն ժամանակ որակի ապահովման ուղղությամբ ՃՇՀԱՀ-ի սակավաթիվ գործողությունները թափանցիկ են և ներքին ու արտաքին շահակիցների համար հասանելի են բուհի պաշտոնական կայքէջում:

3. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը հիմնականում աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը

Հետազոտական ոլորտում Համալսարանի հետաքրքրությունները և հավակնություններն արտացոլված են ՌԾ-ում, որտեղ հստակ նկարագրված են ոլորտի նպատակները, խնդիրներն ու գործողություններ:

ՃՇՀԱՀ-ն ստեղծել է նպաստավոր պայմաններ դասախոսների և ուսանողների հետազոտական աշխատանքներում ներգրավման համար: Ներքին դրամաշնորհները,

խրախուսման մեխանիզմները նպաստում են դասախոսների և ուսանողների մոտիվացիայի բարձրացմանը, ինչպես նաև ուսանողների մոտ հետազոտական և ստեղծագործական հմտությունների զարգացմանը:
Հետազոտության արդյունքներին միջազգային ճանաչում են բերում մեծաքանակ հրապարակումները ազդեցության գործակից ունեցող պարբերականներում:
ՌԾ-ում արտաքին կապերի և միջազգայնացման զարգացումը սահմանվել է որպես գերակայություն, մշակված են մի շարք փաստաթղթեր ոլորտի զարգարցման համար:
ՃՇՀԱՀ-ն ակտիվորեն մասնակցում է միջազգային ծրագրերի, ապահովում է արտաքին շահակիցների հետ բազմապիսի կապերը: Համագործակցում է թվով շուրջ 130 եվրոպական, ՌԴ-ի և ԱՄՆ-ի բուհերի հետ:
1994թ.-ից ՃՇՀԱՀ-ի ճարտարապետության ֆակուլտետի շրջանավարտներին շնորհվող դիպլոմը ֆրանսիական կառավարության կողմից պաշտոնապես ճանաչվել է ֆրանսիականին համարժեք:
Բուհն ակտիվ դերակատար է ՀՀ շինարարական նորմատիվ փաստաթղթերի վերանայումների և մշակումների աշխատանքներում և հաճախ հանդես է գալիս որպես արտաքին պատվերներ կատարող՝ այս իմաստով նաև գործատուի դիրքերից ճանաչելով իր գիտակրթական գործողությունները: ճարտարապետության և շինարարության ոլորտներում մատուցած մասնագիտական ծառայությունների արդյունքում զգալի աճել է բուհի բյուջեի եկամուտները:
Համալսարանում գործում է ներքևից վերև և վերևից ներքև հաշվետվողականության համակարգը, առկա է նաև արտաքին շահակիցներին հաշվետվություններ ներկայացնելու համակարգ, որը նպաստում է թափանցիկության ապահովմանը: Բուհն ունի քառալեզու կայք, որը հնավարություն է ապահովում առկա տեղեկատվության հրապարակայնության համար:

ՄՈՒՀ-ում ստեղծված են հետագա առաջխաղացման և զարգացման նախադրյալներ:

4. Առկա թերացումներն առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից:
5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամին** շնորհել ինստիտուցիոնալ **հավատարմագրում 6 /վեց/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ ներկայացնել թերությունների վերացման վերանայված ծրագիրը և համապատասխան ժամանակացույցը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել.**
   - Կարճաժամկետ, միջնաժամկետ պլանավորման բարելավմանը, դրանց մշտադիտարկմանը և երկարաժամկետ պլանավորման փոխկապակցմանը:
   - ԳԱՑ-երի հստակեցմանը և որոշումների կայացումն ըստ ԳԱՑ-երի կազմակերպմանը:
   - Որակի ապահովման համակարգի զարգացմանը՝ նպաստելով բոլոր ոլորտների շարունակական բարելավմանը:

- Հետազոտության միջազգայնացմանը՝ խրախուսելով իր լաբորատորիաներին համագործակցել ոչ միայն օտարերկրյա համալսարանների, այլև արտերկրի հետազոտական ինստիտուտների հետ:
- Ավարտական աշխատանքներին և մագիստրոսական թեզերին ներկայացվող ընդհանուր պահանջների բարելավմանը:
- Արդյունքահեն կառավարման համակարգի բարելավմանը, բարելավման գործընթացներին արտաքին շահակիցների ներգրավմանը:
- Միջազգային համագործակցությունը նաև ՃՇՀԱՀ-ի այլ մասնագիտական ոլորտներում, օրինակ զբոսաշրջության ուղղությունը, դիզայնը իր տարբեր ոլորտներով, քաղաքային տնտեսությունը, կառավարումը:

4. Կազմակերպել ՃՇՀԱՀ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՃՇՀԱՀ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:
7. Որոշումն ուժի մեջ է մտնում հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2022 թ. դեկտեմբերի 19
ք.Երևան